ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 33/31

ք.Երևան « 10 » Մայիս 2024 թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով 09.03.2024թ.-ից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Վաղինակ Մուրադյանի (ՀՎՀՀ՝ 74426748) դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Վաղինակ Մուրադյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) հայտնում է, որ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Մարտունի, Գետափնյա 2 հասցեում իրականացնում է շինանյութի մանրածախ առևտրի գործունեություն:

Անհատ ձեռնարկատեր Վաղինակ Մուրադյանը 03.01.2024թ.-ին ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ, որից հետո՝ 09.03.2024 թվականին գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 24 միլիոն դրամը և անհատ ձեռնարկատիրոջ կողմից 12.03.2024 թվականին ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով լրացրել է 201. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

09.04.2024թ.-ին անհատ ձեռնարկատերը փորձել է ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, սակայն համակարգը արդեն թույլ չի տվել նշված հայտարարությունը ներկայացնել 09.03.2024թ.-ից շրջանառության հարկ վճարող համարվելու համար (համակարգչի էկրանի սքրինշոտը կցվում է) բերելով հաղորդագրություն՝ Հայտարարություն կարող եք ներկայացնել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը:

Սակայն հարկ է համարում նշել, որ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 254–րդ հոդվածի 4-րդ մասի՝ հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից (բայց այդ հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի) եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ: Եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտը, Օրենսգրքի 268-րդ հոդվածի համաձայն դադարում է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ մինչև հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրը, ապա միկրոձեռնարկատիրության սուբյեկտը շրջանառության հարկ վճարող է համարվում սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով՝ որպես

միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից՝ մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ՝ հարկային մարմին ներկայացնելով հարկային մարմնի հաստատած ձևով նոր հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ (հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ նախկինում ներկայացված հայտարարությունը հաշվի չի առնվում), իսկ այդ կետով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող չհամարվելու դեպքում, Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, համարվում է ԱԱՀ վճարող, անհատ ձեռնարկատերը լրացրել է նշված հայտարարությունը, սակայն մեխանիկական վրիպակի արդյունքում չի հանձնել ՊԵԿ: Կից ներկայացվում է ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի հաշվետվություն - Լրացված հաշվետուություններ բաժնում առկա է 12.03.2024թ. լրացված և ստորագրված հաշվետվաձևատեսակը:

Հարգելի ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմնի բողոքարկման հանձնաժողով՝ խնդրում է հիմք ընդունելով վերը նշվածը (կան նույն իրավիճակի վերաբերյալ նաև այլ նախադեպային որոշումներ), անհատ ձեռնարկատեր Վաղինակ Մուրադյանին ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը 09.03.2024թ.-ից ներկայացնելու հնարավորություն տալ:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Վաղինակ Մուրադյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է 06.07.2022թ.-ին (պետական հաշվառման համար 76.1250285):

Ա/Ձ Վաղինակ Մուրադյանը 03.01.2024թ.-ին ներկայացրել է 01.01.2024թ.-ից միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը և 2024թ.-ից համարվել է միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:

Այնուհետև 01.01.2024-09.03.2024թթ. ժամանակահատվածում Ա/Ձ Վաղինակ Մուրադյանի գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 24 միլիոն դրամը, ինչի արդյունքում 09.03.2024թ.-ից դադարել է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ:

Ա/Ձ Վաղինակ Մուրադյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Ա/Ձ Վաղինակ Մուրադյանը ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով դիմում-բողոք ներկայացրել է 10.04.2024թ.:

3. Բողոքարկման առարկային վերաբերվող իրավական կարգավորումներ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 56-րդ գլխով սահմանված են միկրոձեռնարկատիրության համակարգի վերաբերյալ դրույթները, այդ թվում՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու համար անհրաժեշտ պայմանները:

Այսպես, ՀՀ հարկային օրենսգրքի 267-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը, որոնց՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 24 միլիոն դրամը, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձը, որի՝ նախորդ հարկային տարվա ընթացքում Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել է 24 միլիոն դրամը:

ՀՀ հարկային օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտը դադարում է այդպիսին համարվելուց, եթե ընթացիկ հարկային տարում կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության բոլոր տեսակների, իսկ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 24 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը:

Տվյալ պարագայում ՀՀ հարկային օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով հստակ սահմանված է, որ միկրոձեռնարկատիրության սուբյեկտը դադարում է այդպիսին համարվելուց, եթե՝ ընթացիկ հարկային տարում կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության բոլոր տեսակների, իսկ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 3-ով սահմանված գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 24 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հարկային տարվա ընթացքում որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարած առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը՝ որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի) համարվում է շրջանառության հարկ վճարող, եթե հարկ վճարողը որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ են համարվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հետևյալ դեպքերում և ժամկետներում. հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից (բայց այդ հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ: Եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտը, Օրենսգրքի 268-րդ հոդվածի համաձայն, դադարում է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ մինչև հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրը, ապա միկրոձեռնարկատիրության սուբյեկտը շրջանառության հարկ վճարող է համարվում սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով՝ որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից՝ մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ՝ հարկային մարմին ներկայացնելով հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ, իսկ այդ կետով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող չհամարվելու դեպքում, Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, համարվում է ԱԱՀ վճարող:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Վաղինակ Մուրադյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, որի հետևանքով ավտոմատ կերպով համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող:

Տվյալ դեպքում որոշում կայացնելիս Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև թիվ ՎԴ/3138/05/20 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.11.2022թ.-ի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով արտահայտած դիրքորոշմանը.

«Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելու համար ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետն արդյո՞ք ենթակա է վերականգնման:

Ընդ որում, վերոգրյալ իրավանորմով սահմանված ժամկետը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ենթակա չէ վերականգնման հետևյալ պատճառաբանությամբ՝

Ի տարբերություն դատավարական ժամկետների, որոնց գլխավոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք սահմանում են կոնկրետ դատավարական գործողության իրականացման ժամանակահատվածը, չեն կարող ազդել նյութական վիճելի իրավահարաբերության բովանդակության, այդ թվում՝ դատավարության մասնակիցների միջև նյութահիրավական վեճի դրական կամ բացասական լուծման վրա, նյութահիրավական ժամկետները կարգավորում են օրենքով նախատեսված գործողությունը կատարելու կոնկրետ ժամկետ, որն ուղղակիորեն ազդեցություն ունի նյութական վիճելի իրավահարաբերության բովանդակության վրա: Միևնույն ժամանակ, ի տարբերություն դատավարական ժամկետի, որը բաց թողնելու դեպքում օրենսդրորեն հնարավոր է այն վերականգնել՝ հարգելի հիմքերի առկայության պարագայում, նյութահիրավական ժամկետները վերականգնելու օրենսդրական հիմք առկա չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելու ժամկետը սահմանված է ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, այն համարվում է նյութահիրավական ժամկետ, որը բաց թողնելու դեպքում վրա է հասնում նույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված իրավական հետևանքը:

Վերոգրյալ իրավական դիրքորոշման հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելու համար ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետը, հանդիսանալով նյութահիրավական ժամկետ, ենթակա չէ վերականգնման:»

Ելնելով վերը նշված իրավանորմերի դրույթներից և հիմք ընդունելով սույն որոշման 2-րդ կետում բերված փաստական տվյալները, ինչպես նաև վերը նշված եզրահանգումները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Վաղինակ Մուրադյանի դիմում-բողոքը ենթակա է մերժման:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

09.03.2024թ.-ից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Վաղինակ Մուրադյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկելուն հաջորդող օրվանից:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել դատարան:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ [redacted] ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Digitally signed by ՀՀ ՊԵԿ
Date: 2024.05.13 17:01:52 +04:00
Reason: Signature for ACS system
Location: SRC of the RA

Digitally signed by TAMAZYAN KAREN
2612840184
Date: 2024.05.13 17:01:55 +04:00
Reason: Signature for ACS system
Location: SRC of the RA